

անչափ մեծութիւնը, որովհետեւ անճառելի և անպատմելի է. որովհետեւ ինչպէս աստուածային բնութիւնն է անքննելի, այնպէս էլ սիրոյ բնութիւնն է անճառելի:

Իսկ սէրը, ո՞վ հաւատացեալ եղբայրներ և քոյրեր, ոչ միայն յաւիտենական կեանքին մէջ է խաղաղութեան պտուղը տալիս, այլ և այս աշխարհի կեանքից հալածում է թշնամութիւնը, նախանձը, ատելութիւնը, հայհոյութիւնը, բամբասանքը, հպարտութիւնը և ամենայն չարեաց մայր արծաթսիրութիւնն ու ազահութիւնը, այստեղ մարդկային կեանքի մէջ հաստատելով Երկնային թագաւորութիւնը:

Եւ ահա, այսօր, մենք ևս, եղբայրներ և քոյրեր, կանգնած ենք սիրոյ տաճարի դրանը, այն սիրոյ, որ պատուիրում է. «Ալիւնցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, օրհնեցէք զանիծիչս ձեր»: Այդ դեռ քիչ է, այլ և «աղօթս արարէք ի վերայ այնոցիկ որք լլկենն զձեզ և հալածեն». Ահա քո միակ նպատակը և իսկական վախճանն ու Երկնային սէրը, հա՛յ հաւատացեալ:

Ուստի, եկէ՛ք լուծենք մեր կօշիկները, ամենայն զստահութեամբ ներս մտնենք

այդ սիրոյ տաճարը և նուիրաբերինք ամենակալի սեղանի առաջ մեր ջերմեռանդութիւնը, մեր մաքուր զգացմունքները, մեր սիրտը: Թող սիրոյ թագաւորը Երկնային իւր հուր սիրով մաքրէ, սրբէ և իւր բնական վայր ու տաճարը դարձնէ, իւր սրբութեան խորանը դարձնէ մեր սրտերը, և այնտեղ վառէ իւր սիրոյ անշէջ կանթեղը, որը մեր ուղին լուսաւորէ այս մթին աշխարհում, որպէսզի մենք էլ հաւատով, սիրով և յոյսով ապրենք և ճանաչենք թէ ի՞նչ է ճշմարիտ աստուածապաշտութիւնը. ի՞նչ է Աստուած. ո՞վ է Քրիստոս և ո՞ւր է Քրիստոս:

Ո՞վ է Քրիստոս: Նա որ քաղցածնեքին կերակրում էր, մերկերին հագցնում, հիւանդներին այցելում: Եւ ո՞ւր է Քրիստոս՝ ո՞ւր. «ո՞վ այսպիսի մի մանուկ ընդունի իմ անունով, նա ինձ է ընդունում»: Իսկ ո՞վքեր են քրիստոնեաները: «Ո՞վ սիրում է նա Աստուծոյ սիրում է, նա Աստուծոյ ծնունդ է. նա ճշմարիտ քրիստոնեայ է: Օ՛ն, ուրեմն եկէ՛ք, հետեինք մեր Փրկչին սիրոյ և խաղաղութեան անմահ թագաւորին: Ամէն»:

Էջմիածին ՏԱՒՈՒՇԵՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Փա՛նք Քրիստոսի ամենագոր յարութեան:
Սայը կ'իջնէ Մասեաց լեռնէն,
Անոր վրայ արուներ կան,
Անոր վրայ ոսկի գաներ,
Անոր վրայ կան բեհեզներ ծիրանի,
Անոր վրայ արփայուրդին,
Որուն աչ կո՛ղմն են վեցբեւեան սերովբէներ
Ու ձախ կողմը Բերովբէներ բազմաչեայ:
Իր առջեւը կան սիրուն մանուկներ՝
Տէրունական խաչն իրենց գիրկին մէջ.
Չեո՛քերնին քնար ու սաղմոսաբան,
Կ'երգէին ու կ'ըսէին.
Փա՛նք Քրիստոսի ամենագոր յարութեան:
Բերած են հոն սայլիկն են բերած,
Բերած կեցուցած.
Բայց սայլիկը չէր արժեր,
Բայց անիւր չէր խաղար:

Հարիւր բարդ հո՛ն կայ խորնո՛ւ, վե՛ց բարդ կորնկան,
 Իսկ մե՛կ մանուշակ ան խորնո՛ւն վըրայ:
 Մասեաց աջ կողմէն
 Սայլիկը բերա՛ծ են ու կեցուցած,
 Բայց սայլիկը չէր շարժեր,
 Բայց անիւր չէր խաղար:
 Անոր սամիֆն արծաթէ են, լուծն ոսկի,
 Սամոսիֆն ալ ապրիւիւմի,
 Փոկեր են շարած հոյլ հոյլ մարգարսով.
 Բայց սայլիկը չէր շարժեր,
 Բայց անիւր չէր խաղար:
 ձո՛րս մը կայ հոն՝ հօն ու հապուկ
 Ուռամիջակ՝ հասարակուկ՝
 Լայն քիկունքով՝ խարսիւցեղ՝ անեղագոյ,
 Որ կը ձայնէր եզնամոլին՝
 Կանչ հանելով արտոն մօս:

Եզները սայլին սաք են ու սպիտակ,
 Ծաղկի խայտուցով՝ արագափայլ եւ ընթացող.
 Ամէն եղջիրնին խաչի նմանութամբ,
 Ամէն մազերնին հոյլ հոյլ մարգարսով.
 Եւ անա սայլիկն ըսկսաւ շարժիլ,
 Եւ անա անիւն սկսաւ խաղալ.
 Երբ սայլին կուրծքը շարժեցաւ առեղէն՝
 Ան կը ձայնէր եզնամոլին:

Սինայէն իջած սա՛յլն օրէնքն էր Մովսէսին.
 Ու հարիւր բարդ խորնո՛ւր
 Նահապետներն են մարգարէ.
 Այն կորնկանք վե՛ց քարոյր
 Վեցօրեայ գործքն է Ասուծոյ.
 Այն մէկ հասիկ մանուշակը
 Երրորդութիւնն է միաւոր.
 Խարսիւցեղ այն մանուկը
 Սուրբ Յովնաննէս Մկրտիչն է.
 Սայլին կուրծքն ալ քառակուսի
 Աւետարանն է Քրիստոսի:

Գիլ գիլ կուգար սայլիկը գիլ
 Մասեաց աջ կողմէն,
 Սայլիկը գիլ՝ կուգար գիլ
 Ու նըրընչալով կուգար կը մտնէր սուրբ Երուսաղէմ.
 Եւ Սիոնի նոր զաւակներն երգելով նո՛ր երգ՝ կ'ըսէին.
Փա՛նֆ Քրիստոսի, աշօր իրմէ արձակուէցանք: